Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 15-06-2023 թ. որոշմամբ
««ՕԳՆԻՐ ԵՂԲՈՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՕԳՆԻՐ ԵՂԲՈՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ Եղբայրության փող. 24 բն. 8
1.3 Պետական գրանցման համարը		222.160.768297
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2013-05-18
1.5 ՀՎՀՀ-ն		02256669
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)98100880
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		rpogosyan1987@bk.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Թաթուլ Հարությունյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	3	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Տանիք	65,955,686
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
[illegible]	50,685,073	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	57,117,526	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	50,685,073	

Digitally signed by POGHOSYAN ROMAN 2509870262
Date: 2023.06.21 20:46:32 AMT

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 5 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ______________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ

“Four A Consulting” CJSC

audit accounting advisory assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Օգնիր եղբորդ" բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Օգնիր եղբորդ" Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

14 հունիսի, 2023թ.
Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար

«ՖՈՐ ԷՅ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2021թ. Ծանոթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հետաձգված հարկային ակտիվ	4	7,809	5,665
		7,809	5,665
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	226,319	292,204
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	58,267	60,386
Շահութահարկի կանխավճար		-	1,746
Դրամական միջոցներ	7	5,892	44
		290,478	354,380
Ընդամենը ակտիվներ		298,287	360,045
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ		-	-
Էմիսիոն եկամուտ		-	-
Կուտակված շահույթ		210,537	241,018
		210,537	241,018
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	8	28,565	40,850
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	48,790	67,782
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	10,395	10,395
Շահութահարկի գծով պարտավորություն		-	-
		87,750	119,027
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		298,287	360,045

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023թ. հունիսի 14-ին՝

Տնօրեն
Թաթուլ Հարությունյան

Գլխավոր հաշվապահ
Ռոման Պողոսյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ		67,533	90,479
Վաճառքի ինքնարժեք		(66,011)	(113,984)
Համախառն շահույթ/վնաս		1,522	(23,505)
Այլ եկամուտ		-	-
Իրացման ծախսեր		(1,000)	
Վարչական ծախսեր	11	(16,181)	(7,568)
Դեբիտորական պարտքերի պահուստի ծախսեր		(13,893)	
Այլ ծախսեր		(657)	(3,040)
Գործառնական գործունեությունից վնաս		(30,209)	(34,113)
Ֆինանսական ծախսեր (եկամուտ)		-	2
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		(2,416)	427
Վնասը մինչև հարկերը		(32,625)	(33,684)
Շահութահարկի գծով փոխհատուցում	12	2,144	5,665
Զուտ վնաս		(30,481)	(28,019)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին		-	-
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(30,481)	(28,019)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(30,481)	(28,019)
Ճշգրտումներ		
Շահութահարկի գծովծախս/ փոխհատուցում	(2,144)	(5,665)
Դեբիտորական պարտքերի պահուստի ծախսեր	13,893	-
Տոկոսային եկամուտ	-	(2)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	2,416	(427)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(16,316)	(34,113)
Այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(11,774)	43,968
Պաշարների փոփոխություն	65,885	70,176
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(18,992)	(93,761)
Գործառնական գործունեությունից օգտագործված դրամական միջոցներ	18,803	(13,730)
Վճարված տոկոսներ	-	2
Վճարված շահութահարկ	1,746	9,080
Գործառնական գործունեության համար օգտագործված / ստացած զուտ դրամական միջոցներ	20,549	(4,648)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցի ձեռքբերում	-	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր, զուտ	(12,285)	(15,332)
Եկամուտներին վերաբերող շնորհներից մուտքեր	-	-
Ֆինանսական գործունեության համար օգտագործված/ստացած զուտ դրամական միջոցներ	(12,285)	(15,332)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)	8,264	(19,980)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(2,416)	81
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	44	19,943
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	5,892	44

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 17-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 21.06.2023 20:43